Հեռաուսուցման համակարգի շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական պահանջներ

Օպերացիոն համակարգ

Հեռավար ուսուցման հարթակն աշխատում է Windows, Macintosh և Unix օպերացիոն համակարգերով: iOS և Android օպերացիոն համակարգով աշխատող սարքերի համար այս հարթակը հասանելի է ստորև նշված բոլոր դիտարկիչներով (browser): Սակայն տեսակոնֆերանսները հասանելի են Puffin դիտարկիչի միջոցով: Puffin դիտարկիչը կարող եք ներբեռնել Apple Store-ից և Play Market-ից:

Կապի արագությունը

Ցանկալի կապի արագությունը 4 Mb/s է: Չնայած նախընտրելի է հնարավորինս արագ կապը, սակայն կապի ցածր արագության դեպքում ևս դասախոսներն ու ուսանողները հնարավորություն կունենան տեսնելու բոլոր նյութերը:

Դիտարկիչ (browser)

Հեռավար հարթակի աշխատանքը թեստավորված է հետևյալ դիտարկիչներով՝

- ✓ Google Chrome 49.0 և բարձր
- ✓ Firefox 52.0 և բարձր
- ✓ Safari 5.0 և բարձր
- ✓ Puffin Web Browser

Անհրաժեշտ ծրագրային փաթեթներ

Համակարգչում անհրաժեշտ է ունենալ հետևյալ ծրագրային փաթեթները և ծրագրերը՝

- ✓ *Adobe Flash Player համապատասխան դիտարկիչի համար նախատեսված https://www.network.am/More/AdobeFlashPlayer*
- ✓ Adobe Reader https://www.network.am/More/AdobeReader
- ✓ Microsoft Office կամ OpenOffice https://www.network.am/More/OpenOffice
- ✓ VLC Media Player https://www.network.am/More/VLCMediaPlayer
- ✓ Java https://www.java.com/

Հավելյալ տեխնիկական միջոցներ

- ✓ Խոսափող
- ✓ Վեբ տեսախցիկ (web camera)

Հայերեն տառատեսակի ապահովում

Հայերեն տառատեսակով աշխատելու համար՝

- *Windows XP, Vista, 7, 8, 8.1, 10 օպերացիոն համակարգերում* կարող եք ներբեռնել https://www.network.am/More/KDWin/ ծրագիրը,

- *iOS համակարգում (iPad-ի և iPhone-ի համար)* կարող եք ներբեռնել *https://itunes.apple.com/us/app/haytar/id918936310?mt=8* ծրագիրը,

- *Android օպերացիոն համակարգում* կարող եք օգտվել ներկառուցված հայերեն ստեղնաշարից, իսկ եթե այն բացակայում է, ներբեռնել Gboard հավելվածը և ավելացնել հայերենը՝ որպես մուտքագրման լեզու:

- *MacOS օպերացիոն համակարգում* կարող եք ներբեռնել *www.nayiri.com/docs?l=en&n=0&s=1* ծրագիրը:

Տեսահաղորդակցություն (Webinar)

Տեսահաղորդակցությունն անհրաժեշտ է դասախոսի և ուսանողների առցանց հաղորդակցման համար: Դասախոսն ակտիվացնում է տեսահաղորդակցության համակարգը, որին ուսանողները միանում են իրենց դիտարկիչների միջոցով:

Տեսահաղորդակցությանը միանալու համար ուսանողները պետք է իրենց համակարգիչներում ունենան համապատասխան դիտարկիչի համար նախատեսված Adobe Flash Player ծրագրային փաթեթը: Տեսահաղորդակցությանը մասնակցելու համար ցանկալի է օգտագործել անհատական կամ դյուրակիր համակարգիչ, որին կցված կլինեն վեբ տեսախցիկ և միկրոֆոն:

Ձայնագրություն

Դասընթացում ձայնագրված ֆայլի ձևով առաջադրանք ուղարկելու անհրաժեշտության դեպքում կարելի է օգտվել ձայնագրության համար նախատեսված հետևյալ համակարգչային անվճար ծրագրերից.

- ***Windows օպերացիոն համակարգի համար՝***
  ներբեռնել և տեղադրել Audacity for Windows ծրագիրը, ապա, արձանագրելով ձայնային ֆայլը, ընտրել ֆայլի mp3 ձևաչափը:

- ***Linux օպերացիոն համակարգի համար՝***
  ներբեռնել և տեղադրել Audacity for Linux ծրագիրը:

- ***MacOS օպերացիոն համակարգի համար՝***
  սեղմել հետևյալ հղման վրա՝ http://audacity.sourceforge.net/download/mac:

  Օգտվելով տեղադրման հրահանգներից՝ տեղադրել ծրագիրը:
  Տեղեկացնենք, որ այս տարբերակից օգտվելու դեպքում ծրագիրը պատրաստում է երկու ֆայլ: Երկուսն էլ պետք է ուղարկել դասախոսին: